ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3255-Ա « 30 » հունիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի
Հ.3996-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Սեյրան Խաչատրյանի 22.06.2026թ. հ.Դ-64299-26 դիմումը.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2025 թվականի սեփտեմբերի 30-ի «Անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին» հ.3996-Ա որոշման հավելվածի 16-րդ կետը:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
30.06.2026թ.
հ. 3255-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Սեյրան Խաչատրյան	Թբիլիսյան խճուղի, հ.19/2	հողամաս	Սեյրան Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող, Թբիլիսյան խճուղու հ.19/2 հասցեում գտնվող բնակելի տան /վկ. հ.04062025-01-0229/ բաժանման հատակագծով առանձնացվող 629.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Թբիլիսյան խճուղի, հ.9/12	010338DWSYHR	
2	Սեյրան Խաչատրյան	Թբիլիսյան խճուղի, հ.19/2	հողամաս	Սեյրան Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող, Թբիլիսյան խճուղու հ.19/2 հասցեում գտնվող բնակելի տան /վկ. հ.04062025-01-0229, հող. ընդհ. բաժ. 33.3քմ / զբաղեցրած 351.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Թբիլիսյան խճուղի, հ.9/11	01033LF7BEZF	
3	Համբարձում Սմբատյան /լիազորված անձ/ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ	Ա. Սարգսյան փողոց, հ.19	խանութ	Ա. Սարգսյան փողոցի հ.19 հասցեում գտնվող խանութին /հիմք՝ սեփ. վկ. հ.2162994/ տրամադրել հասցե՝ Ա. Սարգսյան փողոց, հ.2/5	01013AGDLTME	
4	«ՏՄ ՄԵԳԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	Բագրևանդ թաղամաս, հ.60/1 շենք, հ.12	բնակարան	«ՏՄ ՄԵԳԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Բագրևանդ թաղամասի հ.60/1 շենքի հ.12 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.20052026-01-0362, ընդհ.օգտ. 8.5քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 44.9քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Բագրևանդ թաղամաս, հ.60/1 շենք, բն.12/1	01083ABZMFCJ	

5	Էդուարդ Կարսյան	Սարյան փողոց, հ.40 շենք	արվեստանոց	Էդուարդ Կարսյանին սեփականության իրավունքով պատկանող, Սարյան փողոցի հ.40 շենքի արվեստանոցին /սեփ. վկ. հ.1556616/ տրամադրել հասցե՝ Սարյան փողոց, հ.40 շենք, հ.66	01063FEQVLJX	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**